

ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

ازتاک جريدة يومية سياسية وأدبية - للذمة والمسؤولة، إيثاقاً وروياً

1500 L.Ո. 76ԳՎ ՏԱՐԻ, ԹԻԻ 186 (21528) ՈՒՐԱԹ, 17 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003 10 ԷԶ

ԷՐ ՖՐԱՆՍՈՒՄ - ՔԱ. ԷԼ. ԷՄ. ԱՇԽԱՐՀԻ
ՕԴԱՆԱԴՅԻՆ ՄԵԾԱԳՈՅՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՓՐԻՉ, 16 (ԱՅՓ).- Էր Ֆրանսու եւ հոլանդական Քա. Էլ. Էմ. ընկերութիւնները հինգ տարի օր յայտարարած են, թէ իրենց միաձուլման համաձայնագիրը կնքած են՝ ստեղծելով աշխարհի օդանաւային մեծագոյն ընկերութիւնը:

Անկապ պիտի գլխաւորուի Էր Ֆրանսի կողմէ, սակայն երկու ընկերութիւնները իրենց ինքնութիւնները պիտի պահպանեն:
Ընկերութիւնը Էր Ֆրանսու - Քա. Էլ. Էմ. պիտի կոչուի: Խմբակին 81 առ հարիւրը Էր Ֆրանսի պիտի պատկանի, իսկ մնացեալ 19 առ հարիւրը՝ Քա. Էլ. Էմ.ի: Չայն պիտի գլխաւորուի Էր Ֆրանսի տնօրէն Ժան - Սիլիւ Սիլիւսթրա:

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԼԻՔԱՆԱՆԻ ԽՕՍՔԸ ԿԸ ՓՈԽԱՆՑԷ ԱՅՍՕՐ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ Մայնպիոյ մէջ կայացած Իսլամական Վեհաժողովին ներկայացուց Լիբանանը. անոր կ'ընկերակցէր արտաքին գործոց նախարար Ժան Օպէյտ:

Վարչապետ Հարիրի վեհաժողովին առնթեր հանդիպումներ ունեցաւ կարգ մը վարչապետներու եւ արտաքին գործոց նախարարներու հետ, քննարկումի առարկայ դարձնելով շրջանային եւ միջազգային կացութիւնը:

Այս վարչապետ Հարիրի ներկայ գտնուեցաւ Մայնպիոյ վարչապետ Մահաթիր Մոհամէտի կողմէ սարքուած ընթրիքին, ի պատիւ Իսլամական Վեհաժողովին 57 երկիրներու մասնակիցներուն:

Ան հանդիպում մը ունեցաւ նաեւ Քուէյթի վարչապետ շէյխ Սապահ Ահմէտ Սապահի հետ: Վարչապետ Հարիրի Լիբանանի խօսքը պիտի փոխանցէ այսօր:

ՊԸՐՐԻ ՎՏԱՆԳԱՒՈՐ ԿԸ ՆԿԱՏԷ ՍՈՒՐԻՈՅ ՆԿԱՏԱՍՐ ԱՍԵՐԻԿԵԱՆ ԿԵՑՈՒԱԾԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երէկ նկատել տուաւ, որ Սուրիան հաշուետուութեան կանչելու օրինագիծին վաւերացումը ամերիկեան Քոնկրէսին կողմէ գործնական բացատրութիւնն է Սուրիոյ վրայ կատարուած խորախնդարանքներուն:

Պըրրի ըսաւ, որ Սուրիոյ համար այս որոշումը վտանգաւոր է, որովհետեւ եթէ անկա Քոնկրէսն Օճերակոյտին փոխանցուի, ապա օրինագիծը վերջնականապէս վաւերացուած կը նկատուի:

Պըրրի իր հաղորդագրութեան մէջ ընդգծեց, որ ամերիկեան որոշումին վտանգը կը շեշտուի, եթէ օրինագիծը ներկայացուի նաեւ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին, ուր Ռաշիդ Կարմալ կրնայ ճնշում բանեցնել Եւրոպայի վրայ՝ ՎՕՐակցելու իր կեցուածքին, ինչ որ «կանաչ լոյս» տուած պիտի ըլլայ Իսրայէլի՝ ոմբակոծելու Սուրիան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԼԻՔԱՆԱՆԻ ԴԵՍՊՈՒՆԸ ԱՅՑԵԼԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Արթուր Պաղտասարեան երէկ ընդունեց Հայաստանի մէջ Լիբանանի դեսպան Ժակարայի Պուրոս Ժարան: Դեսպանը Լիբանանի խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի ջերմ ողջոյնները եւ յաջողութեան մաղթանքները փոխանցեց Ազգային Ժողովի նախագահին:

Հանդիպման ընթացքին փոխըմբռնման մթնոլորտի մէջ քննարկուեցան հայեւլիբանանեան համագործակցութեան խնդիրները, կարելի չէ նկատուեցաւ միջխորհրդարանական համագործակցութիւնը միջազգային կառոյցներէն ներս: Երկուստեք ընդգծուեցաւ միջպետական եւ յատկապէս միջխորհրդարանական համագործակցութեան ընդլայնման եւ խորացման պատրաստակամութիւնը:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՐԱՐԱՐ ՔԸՐՏԱՀԻԻ ՀԵՑ

Հ. Յ. Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ ներկայացուցիչ ընկ. Յովիկ Մխիթարեանի եւ ընկերակցութեամբ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեանի, երէկ այցելեց հաղորդակցութեան միջոցներու նախարար Ժան Լուի Քըրտահիի:

Հանդիպումը առիթ մը եղաւ խորհրդակցութիւններ կատարելու Լիբանանն ու շրջանը յուլիոյ վաճառական հարցերու շուրջ:

ՄԱՍՆԱԿՑԵՑԷՔ
«ԱԶՏԱԿ»Ի ՄՐՑԱՆԵԻՆ
ԷԶ 3

ԱՋՐՊԵՅՃԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՉԱՆ ԵՐԿՐԻՆ ՄԷՋ ԱՐԻՒՆԱԼԻ ԲԱԽՈՒՄՆԵՐՈՒ

Անունալի երեք հոգի սպանուեցաւ եւ բազմաթիւ ուրիշներ վիրաւորուեցան երէկ Պաքուի մէջ, նախանցեալ օր կայացած Ազրպէյճանի նախագահական ընտրութիւններուն եւ անոնց արդիւնքին լոյսին տակ ծագած բախումներուն հետեւանքով:



Պաշտօնական արդիւնքներուն համաձայն, Իլիամ Ալիեւ՝ Ազրպէյճանի նախագահ Հայտար Ալիեւի 41ամեայ որդին, շահած է քուէներուն 80 առ հարիւրը, այսուհանդերձ միջազգային դէտեր յայտարարեցին, որ ընտրութիւնները հեռու էին միջազգային չափանիշներէ, մինչ ընդհանրութիւնը մերժեց ընդունիլ արդիւնքները:

Ապահովական ուժերու եւ առաւելաբար «Մուսաւթ» կուսակցութեան եւ անոր դեկալար թեկնածու Իսա Ղամպարի համակիրներու միջեւ երէկւան բուռն բախումներուն ընթացքին սպանուեցաւ 51ամեայ ազերի մը, իսկ հինգ տարեկան մանուկ մը, որ ձերբակալուեցաւ փոխադրող զինուորական փոխադրակառքի մը տակ

մնաց, կը գտնուի մահաբունի մէջ: Ազերիական եւ ռուսական կարգ մը աղբիւրներու համաձայն, Յէն 8 հոգի կրնայ սպանուած ըլլալ Պաքուի «Ապտուր» հրապարակի վրայ եւ անոր կից թաղամասերուն մէջ տեղի ունեցած կատաղի

բախումներուն ընթացքին: Իբրեւ առաջին պաշտօնական հակազդեցութիւն երէկուան վարչապետ միջոցառումներուն, իշխող «Ենի Ազրպէյճան» կուսակցութեան գործադիր քարտուղար՝ Ալի Ահմէտով գուցարարները

«անասուններ» որակեց: «Ինչ որ տեսանք, բոնի միջոցով իշխանութեան տիրանալու փորձ էր», ըսաւ ան:

Բախումները ծայր տուին, երբ քանի մը հազար դժգոհ ցուցարարներ Պաքուի կեդրոնական թաղամասերուն մէջ սկսան քարուքանդ ընել վաճառատուններու ցուցափեղկեր եւ կառավարական շէնքեր, քարերով յարձակելով ոստիկաններու եւ անոնց ինքնաշարժներուն վրայ: Ապահովական ուժեր եւ բանակայիններ բերեցին, արցունքաբեր ռումբերով եւ ջրարձակումով փորձեցին ցրուել ցուցարարները: Բազմաթիւ ցուցարարներ սաստիկ ծեծի ենթարկուեցան եւ խոշտանգուեցան ոստիկաններու կողմէ:

Ընդհանրութիւնը կը Շար.՝ էջ 10

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՏՈՒՆԸ ՎԱԵՐԱՑՈՒՑ ՍՈՒՐԻՈՅ ԴԻՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՊԱՀԱՆՋՈՂ ՕՐԻՆԱԳԻԾԸ

Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տունը 398 քուէով որդեգրեց Սուրիոյ դէմ պատժամիջոցներու հաստատումը պահանջող օրինագիծը, որ կը պահանջէ հաշուետուութիւն՝ Սուրիայէն, ինչպէս նաեւ վերջ տալ Լիբանանի մէջ ներկայութեան:

Վաւերացուած օրինագիծը, որ տակաւին կ'ուզէ վաւերացումը Օճերակոյտին, Սպիտակ Տան կու տայ ընտրութիւնը պատժամիջոցներուն, որոնք տնտեսական կամ դիւանագիտական կրնան ըլլալ: Օրինագիծը իրաւասութիւն կու տայ նաեւ Սպիտակ Տան ստեղծելու Միացեալ Նահանգներու մէջ սուրիական դրամատնային հաշիւները:

Ներկայացուցիչներու Տան մէջ հանրապետական մեծամասնութեան ղեկավարը ըսաւ, որ օրինագիծը կ'որդեգրուի, որովհետեւ Սուրիա սպառնալիք է ազատ պետութիւններուն դէմ: Սուրիա կ'ամբաստանուի ահաբեկչական կազմակերպութիւններ հովանաւորելու եւ համապատասխան քանդումի պէնքերու պատրաստութիւնը հետապնդելու յանցանքով: Հանրապետական ղեկավարը ըսաւ նաեւ, որ որդեգրուած օրինագիծը յստակ պատգամ մը պիտի ուղղէ նախագահ Պաշտար Ասատի եւ «Չարիքի առանցքի» անոր ընկերակիցներուն, ըսելու համար, թէ Ռաշիդ Կարմալ պիտի չհանդիսանայ «Նիւ Երկր»-ի ահաբեկչութիւնը, ո՛չ զայն գործողները, ո՛չ ալ՝ հովանաւորողները: «Այս պոլիտիկայի մէջ պետք չէ անտեսուիլ», աւելցուց ան:

Պաշտար Ասատ որդեգրուած բանաձեւը թէեւ պաշտօնապէս չհրատարակուեց, սակայն խիստ ոճով քննադատեց Պուշի կառավարութեան «ապագայնամուլներն» ու պատերազմասեր-

նատարներ: Միւս կողմէ, Իսրայէլի արտաքին գործոց նախարար Սիլվան Շայրմ մեծ ուրախութիւն յայտնեց օրինագիծին որդեգրումին համար: Շայրմ ըսաւ որ ուրախ է, որովհետեւ այս միջոցառումին լոյսին տակ Սուրիա պիտի մեկուսացուի: Ան աւելցուց, որ Սուրիա պետք է գիտակցի թէ չի կրնար պատկանիլ երկու աշխարհներու, որոնցմէ մէկը ահաբեկչական շարժումներ հովանաւորելու է, իսկ միւրը՝ միջազգային համակարգին մաս կազմել ու Ապահովութեան Խորհուրդին անդամներէն մէկը դառնալ է:

Միւս կողմէ, Իսրայէլի արտաքին գործոց նախարար Սիլվան Շայրմ մեծ ուրախութիւն յայտնեց օրինագիծին որդեգրումին համար: Շայրմ ըսաւ որ ուրախ է, որովհետեւ այս միջոցառումին լոյսին տակ Սուրիա պիտի մեկուսացուի: Ան աւելցուց, որ Սուրիա պետք է գիտակցի թէ չի կրնար պատկանիլ երկու աշխարհներու, որոնցմէ մէկը ահաբեկչական շարժումներ հովանաւորելու է, իսկ միւրը՝ միջազգային համակարգին մաս կազմել ու Ապահովութեան Խորհուրդին անդամներէն մէկը դառնալ է: (ԱՅՓ)

ԻՐԱԵԻ ԸԱՐՑՈՎ

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԴԻԻԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԵՒՈՐ ՅԱՂԹԱՆԱԿ ՄԸ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՄԷՋ

Միացեալ Նահանգներու ներկայացուցած բանաձեւը միաձայնութեամբ որդեգրուեցաւ երէկ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին մէջ, որուն 15 անդամները ի նպաստ բանաձեւին քուէարկեցին: 15-0 արդիւնքով Ուաշինկթըն դիւանագիտական կարելու յաղթանակ մը տարաւ: Ապահովութեան Խորհուրդի արարական միակ երկիրը՝ Սուրիա ի նպաստ բանաձեւին քուէարկեց, իմաստով էտք, որ Իրաքի պատերազմին ընդդիմացող եւրոպական երկիրներու ճակատը որոշած է զօրավիգ կանգնիլ բանաձեւին:

Ֆրանսա, Գերմանիա եւ Ռուսիա յայտարարած էին, թէ Իրաքի գծով Միացեալ Նահանգներուն առաջարկած նոր բանաձեւին ի նպաստ պիտի քուէարկեն Ապահովութեան Խորհուրդին մէջ, հակառակ անոր որ վերապահութիւններ ունին բանաձեւին հանդէպ: Անոնք շեշտեցին սակայն, որ ի նպաստ քուէարկելով հանդերձ զինուորական որեւէ ձեւի օժանդար

Հ. Յ. Գ. - ՀԺԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Գ. եւ ՀԺԿ պատրաստ են համագործակցելու որոշ հարցերու շուրջ, որոնց վերաբերեալ ընդհանուր տեսակետներ կրնան յառաջանալ: Այս գծով Հոկտեմբեր 15ին քննարկուած տեղի ունեցաւ ՀԺԿի գրասենեակին մէջ՝ Հ. Յ. Գ. Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ ընկ. Արմէն Ռուստամեանի, Ազգային Ժողովի Հ. Յ. Գ. խմբակցութեան ղեկավար ընկ. Լեւոն Մկրտչեանի, Գերագոյն Մարմինի անդամ ընկ. Գեղամ Մանուկեանի եւ ՀԺԿի կողմէ Ստեփան Գեմիլճեանի, Գրիգոր Յարութիւնեանի եւ վարդան Մկրտչեանի միջեւ:

Հանդիպման ընթացքին կուսակցութիւններու ներկայացուցիչները ներկայացուցին իրենց

ՀԱՉԱՐ ՏԱՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻԻ ԸՅՏ

23

ԻՆՉ ԿԱՅ ԱՍԿԷ ԱԲԵԼԻ ԴԻԲԻՆ

«Մատեն»ի հարկուառը էջերը կը սպառին, բայց չի սպառիր Նարեկացիին գովասանքը Աստուծոյ նկատմամբ: Յաճախ անդրադարձանք թէ ինչպիսի բառերու եւ որակականներու կը դիմէ Նարեկացիին գովասանող փառաբանելու համար: Այն վայրկեանին, երբ կրնաք կարծել որ Նարեկացիին այլեւս ամէն ինչ բաժն է Աստուծոյ մասին, յանկարծ կը բանաք նոր էջ մը, ուր ան անձնաձրոյթ կը սկսի կոր որակականները շարադարձել Աստուծոյ համար: Ետին մնացած աւելի քան չորս հարիւր էջերը չեն բաւած, եւ Նարեկացիին դարձեալ կը սկսի:

Ո՞ր ամենագուր, բարերար, օրհնեալ, Դուռն եւ սկիզբն ու սկզբնապատճառն ամէն բարիքի, Չէ՞ որ դուռն դատապարտիչ չես, այլ ազատարար, Ո՞չ թէ կորուսիչ, այլ միայն գտնող, Կենսաշնորհ ես, ո՞չ թէ մահարար, Ո՞չ թէ տարագրիչ, այլ համախմբող, Ո՞չ թէ մատնիչ ես, այլ կենդանարար, Ո՞չ թէ անիծող, այլ օրհնող միայն, Ծնորհածիր ես, ո՞չ թէ վրիժառու, Սփոփիչ, ո՞չ թէ թշուառացնող: Դուռն չես սասաներ, այլ կը հաստատես, Կը փնտրես միշտ կենսաքի հնարներ, Այլ չես յօրիներ մահուան միջոցներ, Ո՞չ օգնութիւնդ կը մոռնաս երբեք, ո՞չ ալ կը լքես բարիքն, Կուտաս ո՞չ թէ կորստեան վիճի, Այլ ազատութեան կտակ ու պատգամ:

Ո՞չ կ'անարգուիս հարստութեանդ համար, Ո՞չ ալ քեզ կը բամբասեն շնորհներուդ համար, Պարզեմեանդ համար չեն հայհոյեր քեզի, Ո՞չ ալ կը նուխարուիս ձրիորէն բաշխածներուդ համար եւ ստոնց համար, Տէր, ես քեզ կ'առաքեմ Ո՞չ թէ տրտուռեցներ, Այլ աւելի գոհաբանութիւն: Անհետացող մեղքերս, հոգի՛, Լուծե՛ աճե՛քներն իմ, օրհնաբանե՛ալ: Երկարէ ինձի միայն մատդ օգնութեան, Իսկոյն կը դառնամ անբիծ, կատարեալ:

Եւ այս բոլորէն վերջ նախադասութիւն մը պարզ ու յստակ:

Ի՞նչ կայ քեզի համար ասկէ աւելի դիւրին:

Նախադասութիւն պարզ ու յստակ, նաեւ քիչ մը միամիտ, անխորհուրդ կերպով բերնէ փախցուած, որովհետեւ այդ նախադասութիւնը այն տպաւորութիւնը կը թողու թէ Նարեկացիին զբաղած է զԱստուած համոզելով, կամ ըսենք՝ տարհամոզելով: Ըսածք սա է. Աստուած փառաբանեալ ու բարձրեալ, անհետացող մեղքերս բոլոր ու զիս դարձուր մաքրամաքուր. ասկէ աւելի դիւրին ի՞նչ կայ քեզի համար: Կրնանք քիչ մը զարմանալ այն նախադասութեան վրայ: Ասիկա կարծես պարզապէս մը չէ այլեւս, այլ պահանջարկներով, պայմանադրութիւն, իրաւատիրութիւն, կամ դիմացիներ համոզելու համար գործածուած խորամանկ միջոց: Բայց եկէ՛ք չփորձուինք այդպիսի խորամանկութեան մը հետքերը փնտրելու Նարեկացիին մօտ: Նարեկացիին մտքին մէջ ուրիշ բան կայ, աւելի միամիտ ու բարեմիտ քան խորամանկ: Նարեկացիին պատկերացումով, Աստուած ամէն ինչ գիտէ, ամէն ինչ կը տեսնէ, բացի թերեւս մէկ բանէ: Աստուած չի գիտեր, չի տեսնել թէ ինչ՞ որքան բարի է: Իր հոգիինը բարի է, Աստուած նոյնինքն բարեգործութիւն է, բարեբարութիւն է: Աստուած բարեգործութիւն կ'ընէ մեքենաբար, իր կողմէ իրեն համար ստեղծած բնութեան բերումով, առանց այդ բարեգործութեան անդրադառնալու ու անկէ հպարտութեան բաժին հանելու: Այսինքն, գործածելու համար քիչ մը կոշտ արտայայտութիւն մը, Աստուած ինքզինք չի ճանչնար որովհետեւ ինք իր մասին չի մտածեր: Նարեկացիին է ուրեմն որ պիտի յիշեցնէ այդ իրականութիւնը: Տէ՛ր, պիտի ըսէ ան, դուռն անսահմանօրէն բարի ես ու ամենակարող: Ո՞չ մէկը քեզի կը բարկանայ քու հարստութեան համար, ո՞չ մէկը քեզ կը բամբասէ քու շնորհներուդ համար, ո՞չ մէկը քեզ կը նախաձեռնէ ձրիորէն քու բաշխած բարիքներուդ համար, ո՞չ մէկը կը պարսաւէ քու ցուցաբերած ներողամտութեան համար: Ահա թէ ինչու մենք տրտուռն չունինք քեզի նկատմամբ, այլ ունինք միայն գոհաբանութիւն: Ուրեմն անհետացող մեր մեղքերը: Մաքրագործէ մեզ: Ասիկա շատ պիտի լինէ քեզի համար:

Բայց դժուար գործ կ'ա՞յ Աստուծոյ համար: Մենք գիտենք որ Նարեկացիին նկարագրած Աստուծոյ համար դժուար կամ անկարելի գործ չկայ, Աստուած ամենակարողն ու ամենահզօրն է: Բոլոր գործերը դիւրին են Աստուծոյ համար: Եւ Նարեկացիին թերեւս անճարակ նախադասութիւն մըն է որ գործածած է այստեղ: Անճարակ՝ տարբեր իմաստով մըն ալ: Ի՞նչ պիտի պատահէր եթէ ասիկա դիւրին չլըլար Աստուծոյ համար: Աստուած նոյն պիտի չընէ՞ր, այսինքն ներողամիտ աչքով պիտի չնայէ՞ր մեզի, մեզ պիտի չմաքրագործէ՞ր նոյնիսկ եթէ ատիկա դժուար գործ մը ըլլար իրեն համար:

Ռ. ՀԱՏՏԵՃԵԱՆ

ԾԻԾԱՂԵՑԷՔ...

Ծիծաղեցէք, որքա՛ն որ կրնաք: Հակառակ տնտեսական եւ երեւմտական տագնապներուն, հակառակ ընտանեկան եւ ընկերային դժուարութեանց, ինչպէս մարեցէք: Հակառակ արիւնոտ տագնապներուն, քահ-քահ փրցուցէք... Մի՛ ըսէք, թէ ի՛նչպէս... Հակառակ այս բոլորին, կարելի է կուտու ու կուտ խնդար եւ ծիծաղիլ, մինչեւ որ ձեր աչքերէն արցունք իջնէ...

Ննչալու համար պէտք չունիք երգիծանքի: Հարկ չկայ կատակներ կարդալու. հասպտներ տեսնելու մի՛ երթաք: Կատակները զանազան ներկայացումներու ալ մի՛ երթաք. ատոնք ալ սուղ են այս օրերուս: Կարգաչէ՛ք Թուրքիոյ վարչապետ Ռէճեփ Թայիփ էրտողանի քաղաքական վերջին յայտարարութիւնը, որ քանիցս կը կրկնուի: Հազիւ կարգաւորուած, լայն տարածութիւն ունեցող պիտի չկարենանք զսպել մեր քահ-քահ: Վերջապէս մեր գրպանէն բուռ մը թուղթի թաղկինակ հանելով, պիտի սեղմէք ձեր աչքերուն յորդանառտ արցունքները, չորացնելու համար...

Օր ցերեկով, մամուլ եւ հեռուհեռու թղթակցներու ներկայութեան երբ բաւակալու մեծ պետութեան մը պատասխանատուն կը համարձակի ըսել բաներ, որոնք միայն թուրք մը կրնայ ծանուցանել, փաստաբար կրնայ խնդացնել ամենաթիւն տրամադրութիւն ունեցող իսկ...

Ապահովել ետք թրքական խորհրդարանի հաւանութիւնը թրքական գործը իր քաղաքացիները, պարոն վարչապետը հարկ տեսք է որոշ բացատրութիւններ տալ այդ բանակին իրագործելիք նպատակներուն մասին: Կարգացէք եւ եթէ կրնաք բնաւ մի՛ խնդաք... Առաջին հերթին, պարոն վարչապետը կը յայտնէ, որ իր քաղաքի՝ ասկէ բարեկեցիկ պիտի օգնեն ամերիկեան բանակին, իրաքի մէջ: Պաշտօն: Սա երկրին պիտի արժէ շուրջ տասնեակ մը միլիոն տորայր, ամերիկացի տուրք միջոցով քաղաքացիներուն... Ամերիկեան պետութիւնը ինքնին գիտէ, որ ձրի բան չկայ. ամէն բան ունի իր գինը: Այդ մեծ պետութիւնը անցնող վաթսուհամեակին, արգէն իսկ միլիոններ հոսեցուցած է Թուրքիոյ ծակ գրպաններուն մէջ: Քանի մը ամիս առաջ Թուրքիա երբ «ոչ» ըսաւ Ամերիկայի, շատ գլխազիւր «ոչ», Պաշտօն եւ իր օգնականները գտան շիտակ ձեւեր, այդ «ոչ»ը, ապերախտութիւնը, չէզոքացնելու... աւելցուցին միլիոններ քիչ քանակէն ետք...

Պարոն վարչապետը դեռ կը յաւակնի արագորեն իրաքի ամերիկեան զբաւումին վերջ դնելու գործողութիւնը: Պաշտօն. հիմա արգէն կարելի է քահ-քահ փրցնել... Եթէ այդպէս մեծ կարողութիւններով օժտուած է Թուրքիան, ինչու՞ ինք իր գրաւումներուն վերջ չի դնել: Ինչ որ գրաւած է օրինակ իսկենտէրուի նահանգը, աւելի քան վաթսուհամեակէ մը աւելին: Եսասիրութեան չամբաստանելու համար, պիտի չիսօսիմ Արեւմտահայաստանի րնդարձակ տարածութեանց գրաւման մասին: Այս մասին արգէն իրենք իսկ սկսած են «գող սիրտը գող»ի տրամադրութիւն...

էֆենտիին յայտարարութիւնները չեն կրնար խնդացնել ձեզ, կրնաք քահ-քահ փրցնել ի տես տար ֓օյ Պրեմիերի մէկ բարձրագույն ծանուցումին... Սա մարդը կը պահանջէ, որ իրաքի չիսանունին այս գործին, թրքական բանակ իրաք մտցնելու գործին... Թերեւս ոմանք կը կարծեն, որ այս մարդը Պօղոս Առաքեալին նման բան մը պիտի ըլլար, վերջինիցս իրաքը եւ ամէն բան իր տեղը դնէր: Եկէ՛ք տեսէք որ ԻԱ. դարուն, մարդը կը վարուէր այնպէս ինչպէս որ հին դարերուն, Դարեհի օրով ստորագրեց իր վարուէին. եւ կամ Յուլիոս Կեսարի «քոնսուլ»ները կամ Հարուն էլ Ռաշիտի ոստիկան-էմիրները...

Ազգերու ինքնորոշումի իրաւունքը, մարդկային իրաւունքներ, թափանցիկութիւն, ժողովրդավարութիւն քանի՞ անգամ կը վերաբերի Ամերիկայի շահերուն: Իրաքի մէջ Ամերիկայի ամենամոտիկ գաշնակից փերտերը անտեսելու եւ ձգտելու գնով պր. Պրեմիեր յաւաք կը մղէ իր տեսնելու: Աստուած վերջը բարին ընէ բոլորիս համար:

Եթէ խնդալու առիթներ կը պակասի ձեզի, փաստաբար շատ կը պակասի, հետեւեցէ՛ք Թուրքիոյ պատասխանատուներուն յայտարարութեանց: Շատ պիտի խնդաք: Միայն թէ՛ խնդաք թէ՛ լացի արցունքները, երկուքն ալ նոյնն են, արցունք են...

Մէկ բան ալ կ'արժէ յիշեցնել իրտողան էֆենտիին: Իր հովանաւոր եւ շատ առասնծան ողորդական իր աւագախորամարկ սեսցնելու հաստատելու: Երանելի՛ իրաքից: Ամերիկայի ձեռքով «ազատագրուելէ» ետք ահաւասիկ խոզաղութիւն պիտի բերուի ձեզի: Խնդաք կեցէ՛ք... Հոգ չէ՛ թէ այս «քաղաքի» դրացին բնաւ չէ կրցած մարտել ձեր երկրի հիւսիսային շրջաններուն նախնադաս Քերքուքի եւ Մուսուլի կորուստը: Դուք ձափելով դիմաւորեցէ՛ք ձեր «ազատագր»ին այս նորագոյն գիւտը, Թուրքիոյ տեղաւորուելը ձեր երկրին մէջ: Ապերախտ մի՛ ըլլաք: Ձեր «ազատագրար»ը աւագախորամարկ վտանգը կը դիմագրաւէ պէտք ունի ձեր անկուշտ դրացիին նեցուկին...

Եթէ չէրտողան

ՉԻՆԱԿԱՆ

ԲԱՅ ՆԱՍԱԿ

ԼԻԲԱՆԱՆԷՆ ԱՐՏԱԳԱՂԹԱԾ ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏԻՆ

Տարիներ առաջ, երբ պատահամբ Հայկազեան համալսարան կը հանդիպէի, դիմացու էլալայ շրջանին համալսարանի բարտուղարուհին՝ օրդ. Անիթ, ու «լաւ հասար» ըսելով ձերս հրաւիրեց գիտ: Ծանօթացուց բանի մը տարեկան կիներու, որոնք մաս կը կազմէին Հայկազեան համալսարանի ամերիկահայ բարերարներու եւ բարեկամներու խումբի մը:

Կիները իտուր-մատիտ իրենց ձեռքը առած Հայկազեանի շրջանաւարտներուն կը հարցընէին, թէ՛ «Ի՞նչ պիտի ըլլայի, եթէ Հայկազեանը չըլլար եւ ի՞նչ էս այսօր Հայկազեանով»: Առանց բառերը ծամծամելու պատասխանեցի, թէ քոյիքի տեր եւ տնօրէնի ներկայ ղրիքս կը պարտիմ Հայկազեանին, իսկ թէ ի՞նչ պիտի ըլլայի առանց Հայկազեանի, կարելի չէ նոյն ինքնափաստութեամբ պատասխանել, սակայն, հաւանաբար ես ալ իմ կարգ մը տարեկիցներու նման զբաղէի անասնապահութեամբ կամ հողագործութեամբ: Կիները հետաքրքրութեամբ արծանագրեցին տուած պատասխանն ու բաժնուցանք իրարմէ:

Տարիներ ետք, տակաւին մտածումիս մէջ կը յամենայ ամերիկահայ կիներուն հարցումը: «Ի՞նչ պիտի ըլլայի եւ ի՞նչ էս հիմա»: Ու ինքնաբերաբար սրտի ու հոգիի խորքէն կ'արծանագրեմ երախտապարտ ձայն մը. «Միտիմիդ լոյս տորք. Արմենակ Հայկազեան, ու ձեր վարձքը կատար Հայկազեանի հիմնադիր բարերարներ տր եւ տիկնոջ Մեխակեաններ. հող բոնէք դառնայ ոսկի»:

Ու ամերիկահայ կիներու ինձի ուղղած հարցումը կ'ուղղեմ քեզի, Լիբանանէն արտագաղթած, լիբանանահայ վարժարան մը շրջանաւարտ աշակերտ: Ի՞նչ պիտի ըլլայի եւ ի՞նչ էս այսօր: Ովկիանոսներու ուր քաղաքային կրթութիւնը պիտի հասնէի՞ր այսօրուան բարեկր ղրիքիդ, եթէ յանխաձ չըլլայի լիբանանահայ վարժարան մը: Արդեօք պիտի կարենայի՞ր նուազել ու հասնիլ այսօրուան մասնագիտական բարձր ղրիքիդ: Պիտի ունենայի՞ր վաղեմն ու հոգեկան ափսոսանքը հայօրէն ապրելու ու շնչելու: Թերեւս յառողիքի: Սակայն հաւանական է, որ չյաջողէիք հասնիլ այսօրուան ղրիքիդ՝ առանց լիբանանահայ վարժարանէն ստացած մտաւոր սնունդիդ: Այս սնունդին համար դուռն կը վերաբերի միայն փշրանք մը կրթաթոշակ, ունեւոր ըլլայիք թէ աղքատ: Մնացեալ բացը կը գոցուի եւ կը գոցուի անհատ բարերարներու, բարեխաղակա միութիւններու ու մեր կրթական հաստատութիւններուն հոգը իրենց վրայ վերցուցած, ազգայիններու բանակի մը կողմէ:


Հերքը հիմա բուկղ է՝ յիշելու քու լիբանանահայ վարժարանի քու «Այմա Մաթր»ը՝ քու սնունդի մայրը: Լիբանանահայ բոլոր վարժարաններն ալ կ'ապրին իրենց լիբանանեան գոյամարտը, լիբանանեան տնտեսական տագնապը աւելիով անազանցի վերածած է անոնց գոյութիւնը:

Այդ վարժարանները քեզ կը կանչեն, օգնելու իրենց, աւելի փոխադրելու քու երախտագիտութիւնը: Բարեխաղաքային քեզ ընդ մերքարտագաղթող հայ աշակերտներէն կը լսուին երախտագիտութեան ձայներ՝ օգնելու իրենց լիբանանահայ «Այմա Մաթր»ուն, ըլլալ անհատական Շրջանաւարտից Միութեանց նամակով, թէ բարեխաղակա կազմակերպութիւններէն: Վարակիչ էր Ազգային «Յառաջ» Կիւլպէնկեան վարժարանի նախկին սաներու նուիրահաւան: Մէկ գիշերուան մէջ հաւաքելով աւելի քան յիսուն հազար տղարի նպաստ եւ հիմնելով հարիւր հազար տղարի հիմնադրամ մը՝ իրենց սիրելի վարժարանին համար:

Երախտապարտ ու արտագաղթած աշակերտներ շատ են սփիւռքի տարածքին. անոնց օգնութիւնը կրնայ նախադասական ըլլալ, լիբանանահայ վարժարաններուն, եւ նուիրատուները կ'ունենան բանաստեղծի հոգեկան գոհացումը երբ կ'ըսէ. «Կեանքէն ինձի ի՞նչ մնաց. տարօրինակ, ինչ որ տուի մնաց»:

ՊԵՏՐՈՍ ԾԵՄՏԵՍԵԱՆ

3ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ 2003-2004 ՏԱՐԵՇՐԶԱՆԻ ՀՈԳԵԻՈՐ ԳԱՍԱԽՕՍԱԿԱՆ ՀԱՐՔԵՐ Հոգնաւորութեամբ Ն. Ս. Օ. Տ. Արամ Ա. Կեալապատ հայրապետին եւ կազմակերպութեամբ Բիւտանգեան Դաստիարակութեան Բաժնանունքին, ինչպէս ամեն տարի, այս տարի եւս կազմակերպուած է Աստուածաշունչի սերտողութեան եւ հոգեւոր դաստիարակութեան շարք մը: Ստորեւ կը ներկայացնենք ժամանակացոյցը. 1.- Հոկտեմբեր 4էն սկսեալ, Չորեքշաբթի օրը, երեկոյեան ժամը 8:00ին, Պիշֆայայի Ա. Աստուածածին մատրան մէջ (երկաբաթայն դրութեամբ): Դաստիարակութեան ցերեկայ ժամանակի ընկերային, ընտանեկան եւ այլ հարցերու շուրջ: 2.- Հոկտեմբեր 14էն սկսեալ, ամեն երեքշաբթի, առաւօտեան ժամը 10:30ին Ամբիլիաի մէջ, Նիւ Ունեմալով 3այտնութիւն 3օվիանցի գիրքի սերտողութիւնը: 3.- Սոյեմբեր 6էն սկսեալ, ամեն Հինգշաբթի, երեկոյեան ժամը 7:30ին, Ա. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Սոր Ատանա, Նիւ Ունեմալով Պօղոս Առաքեալի երայեցիներուն ուղղուած նամակ սերտողութիւնը: 4.- Յունուար 12էն սկսեալ, ամեն Երկուշաբթի, երեկոյեան ժամը 8:00ին, Ամբիլիաի մէջ, տորքեր Նիւ Ունեմալով, բաղուն Աստուածաշունչէն: 5.- Ռատիոկայանի յայտագիր «Ամայն Ձայն»էն, «Հոգեւոր խնդր» վերնագրով, ամեն Շաբթի օրը, առաւօտեան ժամը 9:45էն 10:30: Կը հրաւիրենք ժողովուրդը, որպէսզի հաղորդ դառնայ սոյն հոգեւոր ձեռնարկներուն: ԲՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԲԱԺՆԱՆՈՒՆԷ



«Ազգակ»ի «Անահիտ» ամսաթերթը Սոյեմբերէն սկսեալ յաջորդական օրերով հարցազրոյցներ պիտի ունենայ մասնագէտ բժիշկներու հետ: Առիթ պիտի տրուի նաեւ մեր ընթերցողներուն ուղղելու իրենց հարցումները: Ձեր հարցումները կրնաք ուղղել անձամբ կապելով «Ազգակ» կամ գանձուց ղրկելով ֆաքս կամ Ե-ճամակի ճամբով: «Ազգակ»ի հեռաձայնի թիւերն են 01-258526 եւ 01-260115, ֆաքս՝ 01- 258529, իսկ Ե-ճամակի հասցէն՝ anahidmonthly@hotmail.com Սոյեմբեր ամսուան հարցազրոյց պիտի ըլլայ ընդհանուր մարմնի մասնագէտ տորք. Յակոբ Մելքեանի հետ: Կը սպասենք ձեր հարցումներուն:

7րդ Արտուեստ



«ԼՈՒՌ ԵՒ ԽԱՂԱՂ ԲՈՒՆԱԳՐԱՒՈՒՄԸ ԱՒԵԼԻ ՍԱՐՍԱՓԵԼԻ Է»

ԿՐԸՄԸ «ԼՐ ՍԵՐ ՎՈԼԱՆ»-Ի ԲԵՏԱԴՐՈՒՉ ՈՒՆՏԱ ԶԱՐԱԼ ՍԱՊՊԱՂ

Լիբանանցի, սակայն փարիզաբնակ բեմադրիչ Ռանտա Շահալ Սապպաղ ներկայիս կը գտնուի Լիբանան, իր մրցանակակիր ժապաւեճին՝ «Լը սեր վոլան»-ի լիբանանեան առաջին ցուցադրութեան առիթով: Ռանտա Շահալ Սապպաղ նախապէս բեմադրած է «Նօ կեր էմփրիտան» (1995), «Լէ գ'էնֆիտէլ» (1997), «Է սիվիլայատ փիփլը-քրէյզի Պէյրութ» (1999) եւ այլ ժապաւեճներ: Այս վերջինին համար 1999ին ան արժանացած է ԵՈՒՆԵՍԿՕ-ի մրցանակին: «Լը սեր վոլան», որ Սեպտեմբերին տեղի ունեցած Վենետիկի 60րդ մութրային տիրացալ դատական կազմի յատուկ «Արժաբեայ առիճ» մրցանակին, ներշնչուած է հարաւային Լիբանանի սահմաններէ գիւղի մը առօրեայ կեանքէն ու յարաբերութիւններէն: Ժապաւեճը կը ներկայացնէ բռնագրաւումի ծանրութեան տակ անշարժացած գիւղական մթնոլորտը, որուն ընկերային պարտադրանքներուն դիմաց ցցուող պատանի Լամիպն հարս կը դրկուի գիւղին իսրայելեան սահմանէն անցարգելներով ու փշաթելերով բաժնուած բաժինը: Յառաջիկայ շաբաթներուն «Լը սեր վոլան»-ը պիտի ցուցադրուի լիբանանեան շարժապատկերի սրահներուն մէջ: Այս ելուց կը ներկայացնենք ժապաւեճին բեմադրիչ Ռանտա Շահալ Սապպաղի հետ հարցազրոյց մը:

մար հարաւային Լիբանանի բռնագրաւում գիւղի մը պատկերը:

Ռ. Շ. Ս. - Ժապաւեճին հերոսները կ'ապրին իրենց պարտադրուած իրավիճակ մը, որ կ'արտայայտուի թէ՛ արտաքինապէս՝ Իսրայելի պարտադրած բռնագրաւումով, եւ թէ՛ ներքինապէս՝ հերոսներու փոխյարաբերութեան ծիրին մէջ կատարուած բռնադատումներով եւ հարկադրանքներով: Կողմնակի շրջանը չի դիմադրուելու ռուսներու եւ փամփուշտներու տարաքի, այլ՝ կ'ապրի ամէնօրեայ լուռ պատերազմ մը, որ իրողական բռնագրաւումին պատճառով ունի հանդարտ դիմագիծ: Սակայն ասիկա աւելի սարսափելի է: Ժապաւեճին մէջ բռնութեան բացակայութիւնը կը շեշտէ բռնագրաւումին եւ պատերազմին հաստատումը: Պարտադրուած այս վիճակը բնակիչներուն համար դարձած է սովորական եւ ընդունուած առօրեայ: Ընտրեցի պատերազմը ներկայացնել՝ երեւութական խղաղութեան դիմակով:

«Ա.» - Ժապաւեճին ցկարահանման ընթացքին սահմանային դժուարութիւններու հանդիպեցա՞ք:

Ռ. Շ. Ս. - Բնաւ, հակառակ անոր որ նկարահանումներուն սկսանք 11 Սեպտեմբեր 2001ի դէպքերէն ետք: Երեք ամիս շարունակ մնացինք Արեւմտեան Պէքաս, ուր ոչ մէկ դժուարութեան հանդիպեցանք:

«Ա.» - Ի՞նչ գուգահեռներ կը գծէր ժապաւեճին իր անուր տուող քուղիկին եւ գլխաւոր հերոսին: Լամիայի կերպարին միջեւ:

Ռ. Շ. Ս. - Թուուցիկը նոյնինքն Լամիայի ոգին է, քանի որ անոր նման ունի թեթեւ բնութիւն եւ սահմանները կտրել անցնելու կարողութիւն: Այդ առիթով բեմադրիչը իր նոր ժապաւեճին մասին գրուցած է լրագրողներու մարզած եմ, որպէսզի դիմադրեմ ներկայի շարժապատկերի արուեստին խախտած չափանիշներուն: Այսօր կ'ապրինք շարժապատկերի հեղեղի մը մէջ, որուն դէմ կ'ուզուի թէ երբեմն կը պատրաստուին լաւ ժապաւեճներ, սակայն ընդհանուր



ցիկին հետ: Անոր հոգին նոյնպէս ատակ է ազատութեան եւ թուիչներու:

«Ա.» - Ի՞նչ հակազդեցութիւն ունեցաք, երբ Վենետիկի փառասօցին դատական կազմը իր յատուկ մրցանակով պարգևատրեց «Լը սեր վոլան»-ը: Ըստ ձեզի, ի՞նչ էր, որ գրաւած էր դատական կազմին անդամները:

Ռ. Շ. Ս. - Շատ անակը կ'ապրէինք ինծի համար: Արդէն իսկ Փարիզ դարձած էինք, երբ մեզի տրուուին վերադառնալու եւ մրցանակը ստանալու:

Դ ա տ ա կ ա ն կ ա զ ի ն անդամները, ինչպէս հետագային արտայայտուեցան, տպաւորուած էին ժապաւեճին մէջ ներկայացուած թաքուն բռնագրաւումի նիւթով: Ժապաւեճը կարելի է վերագրել բռնագրաւումի իրավիճակներ ապրած այլ ժողովուրդներու հոգեվիճակին:

Ուրախ եմ, որ Վենետիկի մէջ իր ցուցադրութեան ընթացքին ժապաւեճը արժանացած էր նաեւ կարողութիւն գնահատանքին: Կը կարծեմ, որ այս մէկը եւս իր դրամամբ դիմագիծ չունենալու գործը են: Եթէ չկայ մենք կը կորսուինք, կը գործը խտացումն է հայկորսուի նաեւ մեր տեսակը: Արուեստագէտը նաեւ մտահոգութիւն յայտնած է, թէ կորսուելու վտանգի մէջ է նաեւ հայկական դերասանական դպրոցը:

«Տեսնել եւ մեռնել» ժապաւեճին պատրաստութիւնը տեւած է տարիներ: Բեմադրութեան համար մտախոյզ Նահանգներու մէջ տեսակցած է թատերագիր Նիլ Սայմոնի հետ:

կան ազդեցութիւնը ունեցաւ, որ ժապաւեճը արժանանայ դատական կազմի գնահատանքին:

«Ա.» - Ի՞նչ պիտի ըլլայ ձեր յաջորդ ժապաւեճը:

Ռ. Շ. Ս. - Արդէն իսկ սկսած եմ գեղարուեստական երկար ժապաւեճի մը պատրաստութեան, որուն նիւթը խաչակրական երկրորդ արշաւանքն է: Սուրահատին էլ յուպիի եւ



Ռիչըրտ Աուլմանի քաղաքում ներկայացնող այս ժապաւեճը հաւանաբար ըլլայ միջազգային արտադրութիւն (գերմանական, պելճիքական, անգլիական, ֆրանսական): Դերասանական կազմը բաղկացած պիտի ըլլայ լիբանանցի եւ օտար արուեստագէտներէ:

Նոր ժապաւեճներ

«ՏԱՌԻՆ ՌԻԹ ԼԱԿ» Բեմադրիչ՝ Փիթըր Ռիս

1960ական

բուականներու Տորիս Տէյ-Ռոքը Հատարի սիրային կատակերգուն փիլեմներուն պատճառով մըն է այս ժապաւեճը, որ յազեցած է բոլոր այն տուեալներով, որոնք կը յատկանշեն տուեալ ժամանակաշրջանի այս սեռի գործերը: Գլխաւոր հերոսներուն դերերով հանդէս եկած են Ռոնէ Զելուէկը եւ Էուրը Մըք Կրեյլը, որոնք կը մարմնաւորեն իրարու դէմ թաքուն հակամարտութիւններ, սակայն երեւութական սիրալիրութիւն ունեցող երկու լրագրողներու կերպարները: Յետ իր «Տառն ու իմ լազ» խորագրեալ գիրքին հրատարակութեան եւ գտած համաշխարհային յաջողութեան, սիրոյ անկումը շատագոյն Սանտրա (Զելուէկը) անմիջապէս թաւալուր կ'իյնայ իր մրցակիցին՝ Քէյին (Մըք Կրեյլը) լարած սիրային ծուղակին մէջ: Երկու բեւեռներու բախումը գուպարելի եւ հետաքրքրական պահեր կը ստեղծէ՝ առանց սակայն կարեւոր գերազանցելու Հատար-Տէյ գործակցութեան արդիւնքը եղող ժապաւեճները:



«ՍՈՒԻՄԻՆԿ ՓՈՒԼ» Բեմադրիչ՝ ՅԵՐՆՍՈՒԿ ՕՁՈՆ

Սարա Մորթըրը (Շառլոթ Ռեմփլիկ) խորհրդաւոր վեպեր գրող բրիտանացի վիպագիր մըն է, որ կը կարծէ, թէ իր հրատարակչին համարանոցին մէջ պիտի ունենայ իսկական արձակուրդ մը: Սակայն անոր ծրագրերը շուրջ կ'իյնան, երբ նոյն վայրը կը յայտնուի հրատարակչին երիտասարդ դուստրը (Լուսիվիլ Սաքի), որուն հրաբխային խառնուածքը կը խանգարէ գրագիտուի անձնական կեանքն ու ստեղծագործական աշխատանքը: Խորհրդաւոր պահերով հարուստ այս թրիլլերը դիպաշարը կը ծաւալի նաեւ անլոյծ մնացած ռեալիստ արարքի մը շուրջ, ինչ որ ամէն կը սրէ մթնոլորտը: Նշենք, որ իր բեմադրութեան եւ դերասաններուն խղաղութեան շնորհիւ ժապաւեճը արժանացած է շարժապատկերի միջազգային բնագոյններու գնահատանքին:

«Ս.ՈՒ.Ա.Թ.» Բեմադրիչ՝ Քլայր Դոնալդ

Իբրեւ ոստիկանական «լուրջ» ժապաւեճ մը հրապարակ իշած է ծանուցումներու շնորհիւ իր շուրջ լայն հետաքրքրութիւն ստեղծած «Ս.ՈՒ.Ա.Թ.» ոչինչով կը տարբերի այս սեռի բազմաթիւ միջակ ժապաւեճներէ: Հեռատեսլային համաճումը դիպաշարը մեծ պատու բարձրացնող այս ժապաւեճը թէեւ կրճար հրատարակ Սեմուէլ Էլ ձոնսընի, Քոլին Ֆէրլիի եւ Օլիվիէ Մարթինի գիւղական թեմայով, ձգտումներով եւ շեղումներով հարուստ դիպաշար մը: Երոպական թմրեցուցիչի մաֆիայի մը պետին բանտարկութեան եւ զինք ազատ արձակողներուն մէկ միլիոն տոլար վարձատրութեան խոստումները ետք, գաղտնի ոստիկաններու նորակազմ բաժանումին համար կը բացուի աշխատանքի աշխուժ դաշտ մը: Հայտնումի եւ շեշտի տեսարաններով հարուստ ժապաւեճը կրճար գրողներու հանդիսատեսը, առանց սակայն կարեւոր հետք մը ձգելու այս սեռի ժապաւեճներու մէջ:

«ՊԷՅՁԻՔ» Բեմադրիչ՝ ՃՈՆ ՄԸԲԹԻՐԸՆ

Փանամայի անտառներուն մէջ, ուր իւրաքանչիւր քայլափոխի վտանգ կը սպառնայ, Սեմուէլ Էլ ձոնսընի մարմնաւորած կերպարը կ'առաջնորդէ գիւղական մարգումներու ենթարկուող զոհատ մը: Գրեթէ ամբողջ ժապաւեճը տեղի կ'ունենայ փոքրիկ տարածքում մը մթնոլորտ մէջ: Զինուորական մարգումները կը նպատակադրեն նաեւ անուղակի թրեմ հետախուզել վեթերան գիւղականի մը անհետացման դէպքերը: Անակակալ դարձուածներով, հետադարձ հայեացքներով եւ խորհրդաւոր մթնոլորտով այս թրիլլը, թէեւ կրճար գրողներու այս սեռին սիրահար հանդիսատեսը, սակայն կը մնայ հիմնական եւ կարեւոր ճիւղէ գուրկ: Սեմուէլ Էլ ձոնսընի կողքին ժապաւեճին մէջ դեր ստանձնած են ձոն Թրավոյթա, Քոնցի Նիլսըն եւ ուրիշներ:

ԺԱՊԱՒԵՆՆԵՐ - ԿԱՐԾԻՔ

- ՏԱՌԻՆ ՌԻԹ ԼԱԿ (Ամփիր/Եսփաս, Սոսերո, Ֆրիուէլ, Սոֆիլ, Սքալլէ 2001, Լաս Սալինաս, Կալաքսի)
- Ս. Ռ. Ա. Թ. (Ամփիր/Տիւն, Եսփաս, Սենթ Էլի, Սոսերո, Ֆրիուէլ, Սքալլէ 2001, Լաս Սալինաս, Կալաքսի, Սքարլէյթ)
- ԻՊԵԼԻՆ ԶՄՊ (Ամփիր/Տիւն, Սենթ Էլի, Սոսերո, Ֆրիուէլ, Սոֆիլ, Սքալլէ 2001, Լաս Սալինաս, Կալաքսի, Սքարլէյթ)
- ՌԻԱԹ Ե ԿՈՒՈ ՌԻՆՈՅՑ (Ամփիր/Տիւն, Եսփաս, Սոսերո, Ֆրիուէլ, Սքալլէ 2001, Լաս Սալինաս, Կալաքսի)
- ՍՈՒԻՄԻՆԿ ՓՈՒԼ (Փլանք/Բոնքորտ, Ապրաժ, Չուք, Թրիփոլի)
- ՊԷՅՁԻՔ (Փլանք/Բոնքորտ, Ապրաժ, Չուք, Թրիփոլի)
- ՕՓԸՆ ՌԵՅՆՑ (Ամփիր/Տիւն, Սոսերո, Ֆրիուէլ, Սքալլէ 2001, Լաս Սալինաս, Կալաքսի)
- ՍԻՄԻՍՏ (Ամփիր/Տիւն, Սենթ Էլի, Սոսերո, Ֆրիուէլ, Սքալլէ 2001, Կալաքսի)
- ՌԻԱՆ ԸՓԱՆ Ե ԹԱՅՄ ԻՆ ՍԵՆՍԻԹԵՕ (Փլանք/Չուք, Բալիթ, Բոնքորտ, Սքարլէյթ)
- ԼԻԿ ԱՅ ԵՔՍԹՐՈՒՍԻՆՏԵՐԻ ՃԵՆԹԸԼՍԵՆ (Ամփիր/ Սոսերո)
- ՊԱՏԸԼՈ ՍՈՒՃԸՐՁ (Փլանք/Ապրաժ, Չուք, Բոնքորտ)
- ՏԸ ՓՈՒԼ (Փլանք/Բոնքորտ, Ապրաժ, Չուք, Թրիփոլի)
- ՊՈՒԼԵԹՐՈՒՖ ՍԱՆԸ (Փլանք/Բոնքորտ, Ապրաժ, Թրիփոլի, Ֆրիուէլ)
- ՊԵՏ ՊՈՅՁ 2 (Ամփիր/Տիւն, Եսփաս, Սենթ Էլի, Սոսերո, Ֆրիուէլ, Սքալլէ 2001, Լաս Սալինաս, Կալաքսի)
- ԹԻՐ ԱՅ ՏԸ ՍԱՆ (Ամփիր/Եսփաս, Սքալլէ 2001, Կալաքսի, Ֆրիուէլ)
- ՍՓԻՐԻԹԸՐՁ ԸՈՒԷՅ (Փլանք, Ապրաժ, Բոնքորտ)
- ՏԸ ԱՅՅ ԱՅ ՏԵՅՅԱՆ ԿԵՅՅ (Փլանք/Բոնքորտ, Չուք, Ապրաժ)
- ՔՆՏԵՆՆԵՆ ԱՅ Ե ՏԵՅՅԱՆ ՍԱՅՅՆ (Փլանք/Չուք, Բոնքորտ, Ապրաժ)
- ՓԱՅՐԸՅ ԱՅ ՏԸ ԲԵՐԻՊԻԸՆՁ (Փլանք/ Չուք, Ապրաժ, Բոնքորտ, Թրիփոլի)
- ՊՐՈՒՄ ՕԼՍԱՅԹԻ (Փլանք/ Ապրաժ, Բոնքորտ, Չուք)

●●●●● Գերազանց ●●●●● Չատ լաւ ●●●●● Լաւ ●●●●● Սիրակ
●●●●● Գեղեցիկ ●●●●● Գեղեցիկ ●●●●● Գեղեցիկ

ԸՆԴՐ ԺԱՊԱՒԵՆՆԵՐ ՍՐԱՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԹԱՍՏԱՅՆԻ ԹԻՒԻԵՐԸ
Եսփաս - 09/212516 - Սոսերո - 01/616707 - Տիւն - 01/792123 -
Սոֆիլ - 01/328806 - Բոնքորտ - 01/738439 - Ապրաժ - 09/226010
Ֆրիուէլ - 01/485590 - Ապրաժ - 01/292192 - Քալիթ - 09/912503 - Չուք - 09/221363 -
Սքարլէյթ - 08/813901 - Սենթ Էլի - 04/406706, Թրիփոլի - 06/442471:

Հ.Մ.Բ.Մ. ԱՆԹԻԼԻԱՍ ՄԱՍՆԱՃԻՂ
KUNG FU ՂԱՍՆԹԱՅԸ

Հ.Մ.Բ.Մ. Անթիլիասի մասնաճիղը, հաճոյքը ունի յայտարարելու, թէ սկսած է KUNG FU ղասնթ-բացըներու, մասնաճիղաբար պատանդներու համար:

Մարզումները տեղի կ'ունենան Շաբաթ օրերը, ժամը 2:00էն սկսեալ, Աղբալեան - Հ.Մ.Բ.Մ. մարզաձալկութային համալիրին մէջ:

Մասնակցի փափաքողները կրնան հեռաձայնել հետեւեալ թիւերուն. 04 - 722903 եւ 03 - 384020, կամ անձամբ ներկայանալ համալիր, Շաբաթ օրերը, կ'եսորէ ետք ժամը 1:30էն սկսեալ:

www.hamazkayin.com

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԱՐԻԱԿԱՄ ԶԵՕՅԼԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Հոկտեմբեր 2003, Նոր Մարաշի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցոյ մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ՀՄԱՅԵԱԿ ՉՂԱԶԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Հոկտեմբեր 2003, Նոր Մարաշի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցոյ մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ԱԻԵՏԻՍ Վ. ԲԵՇԻՇԵԱՆԻ (մահացած Փարիզ) մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Հոկտեմբեր 2003, Ջալալայի Հայ Կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00ից:

ՄԻՀՐԱՆ ՊԱԼԵՍԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Հոկտեմբեր 2003, Պուրն Համուտի Հայ Կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00ից:

ՊԵՏՐՈՍ ՕՍՄԱՆԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Հոկտեմբեր 2003, Պուրն Համուտի Հայ Կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00ից:

ԱՆԱՀԻՏ ԵՐԱՍԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Հոկտեմբեր 2003, Էջրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցոյ մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒՒ 5568
Պատրաստեց՝ **Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ**

1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

- | | |
|---|---|
| <p>1. Խորուրթիւն - Ստացական գերանուն:</p> <p>2. Թալանտի նախկին անունը - Հողային կալուած:</p> <p>3. Ճակիթ - Մեղուախոտ:</p> <p>4. Ածականակերտ մասնիկ - Ժանտափուլ:</p> <p>5. Անթուրթիւնի ուժաթափուլ - Իրաքեան լրատու գործակալութիւն:</p> <p>6. Յուզական ածական - Դէմք - Գալուստ:</p> <p>7. Երասխ գետի ձուկ - Հերթիւ:</p> <p>8. Պահք միջոց - Մանիք:</p> <p>9. Արական անուն - «Միրափ» Հայաստանի հնարար Մարտի:</p> <p>10. Մուկերու ծուղակ:</p> <p>11. Ցանցառ - Արամ Հայկազի երկերէն:</p> | <p>1. Յրտամարմին - Արամբ:</p> <p>2. Դաժան, անհամարձր - Ակնոցաւոր օձ:</p> <p>3. Մեծ մայր - Ունայն:</p> <p>4. Ըմպելիք - Վահան:</p> <p>5. Թեփաթեւ միջուկ - Չորցուած պտուղ - Հայկական ամիսներու ժիւօրը:</p> <p>6. Յուզական ածական - Գեղամ Սարեանի երկերէն - Հայ թագուհի:</p> <p>7. Չայնակից տառեր - Վերապրած բեկոր - Յուզական ածական:</p> <p>8. Յետոյ - Կրկնուած ռազմաձայներ - Հեռու:</p> <p>9. Գեղամ Սարեանի երկերէն - Հայ թագուհի:</p> <p>10. Մեր հին դրացիներէն - Ափրիկեան գետ:</p> <p>11. Անփորձ, նորավարժ - Արու այծ:</p> |
|---|---|

ԹԻՒ 5567

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	Ա	Բ	Գ	Դ	Ե	Յ	Զ	Է	Ը	Թ	Ճ
2	Ա	Բ	Գ	Դ	Ե	Յ	Զ	Է	Ը	Թ	Ճ
3	Ա	Բ	Գ	Դ	Ե	Յ	Զ	Է	Ը	Թ	Ճ
4	Ա	Բ	Գ	Դ	Ե	Յ	Զ	Է	Ը	Թ	Ճ
5	Ա	Բ	Գ	Դ	Ե	Յ	Զ	Է	Ը	Թ	Ճ
6	Ա	Բ	Գ	Դ	Ե	Յ	Զ	Է	Ը	Թ	Ճ
7	Ա	Բ	Գ	Դ	Ե	Յ	Զ	Է	Ը	Թ	Ճ
8	Ա	Բ	Գ	Դ	Ե	Յ	Զ	Է	Ը	Թ	Ճ
9	Ա	Բ	Գ	Դ	Ե	Յ	Զ	Է	Ը	Թ	Ճ
10	Ա	Բ	Գ	Դ	Ե	Յ	Զ	Է	Ը	Թ	Ճ
11	Ա	Բ	Գ	Դ	Ե	Յ	Զ	Է	Ը	Թ	Ճ

աբ 94

bezdig_mezdig@hotmail.com

ՍԱԿԱՐԱՆ

Պէտրոսի սակարանից մէջ օտար դրամացիներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթուկի	28,45 - 28,65	լ.ն.
Քուէյթեան տինար	5122,00 - 5147,00	լ.ն.
Յորդանանեան տինար	2121,00 - 2131,00	լ.ն.
Պահրէյնեան տինար	3985,00 - 4010,00	լ.ն.
Ա.Մ.Էմիրութեանց տիրիամ	410,75 - 412,75	լ.ն.
Քաթարեան ռիալ	413,75 - 415,75	լ.ն.
Սէուտական ռիալ	402,00 - 404,00	լ.ն.
Օմանեան ռիալ	3895,00 - 3920,00	լ.ն.
Եգիպտական կիւն	220,00 - 230,00	լ.ն.
Անգլիական սթերլին	2525,00 - 2535,00	լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1132,00 - 1137,00	լ.ն.
Թրքական լիրա	106,25 - 106,75	լ.ն.
Կիպրական փաունտ	2990,00 - 3015,00	լ.ն.
Ճափոնական հապար եէն	13,65 - 13,75	լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00	լ.ն.
Քանադական տոլար	1137,00 - 1142,00	լ.ն.
Աւստրալիական տոլար	1037,00 - 1042,00	լ.ն.
Եւրօ	1755,00 - 1765,00	լ.ն.

● **ՈՍԿԻ**

Անգլիական մէկ ոսկի	144,000 - 149,000	լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	129,500 - 134,500	լ.ն.
Օսմանեան մէկ ոսկի	119,500 - 124,500	լ.ն.
Մեքսիքական փետսո	687,000 - 707,000	լ.ն.

Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	17,925,000 - 18,125,000	լ.ն.
Մէկ օնս ոսկի	371,50 - 372,00	Տ
Մէկ օնս արծաթ	4,92 - 4,94	Տ

● **Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.**

Եւրօ	1.1643 - 1.1647
Քանադական տոլար	1.3215 - 1.3220
Չուիցերիական ֆրանք	1.3302 - 1.3307
Ճափոնական եէն	109.57 - 109.62
Մէկ սրերլին	1.6761 - 1.6765

Մէկ փոլար 585 դրամ

● **ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒԴԹԵՐ**

Գինի Ա. ճշդում Գինի Բ. ճշդում

Ա. կարգ	4,18	4,18
Բ. կարգ	-	-

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՋԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)
 Ձեր բնարականին մասին լաւ լուր մը պիտի ստանաք: Կարգադրելիք հարց մը այսօր վերջնական լուծում պիտի ունենայ՝ հոգեկան խաղաղութիւն պարգեւելով:

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)
 Սրբանշնի է օրը բոլոր անոնց համար, որոնք ծնած են «Յուլ» աստղին ներքեւ: Եթէ կրնաք, այսօր գացէք տեղ մը շաբաթավերջը վայելելու սիրային մթնոլորտի մը մէջ:

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)
 Հաշուեցոյց մը պիտի ստանաք, որ իբրեւ գումար այնքան բարձր չէ, ինչքան որ կը կարծէիք: Այս իրողութիւնը պիտի հանգստացնէ ձեր միտքը: Օրը նպատար է:

ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)
 Ամսուան լաւագոյն օրն է ասիկա ձեզի եւ ձեր սիրելիին համար: Ձեր հմայքը մեծ ազդեցութիւն պիտի գործէ ձեր շրջապատին վրայ: Ունիք դրամական շահեր:

ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)
 Յաջող օր մըն է ասիկա՝ քննութիւն մը յաջողութեամբ պսակելու կամ լաւ համաձայնութիւն մը կնքելու ձեր ասպարեզին վերաբերեալ: Պիտի ըլլաք հանդարտ եւ յաջողութեան բարձրակետին վրայ:

ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
 Ձեր բոլոր սիրելի բարեկամները ներկայ պիտի ըլլան ձեր հրաւերին ու պիտի անցընէք հիանալի երեկոյ մը՝ ձեր յարկին տակ: Օրը ունի նաեւ այլ կարգի յաջողութիւններ:

ԿՇԻՌԻՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
 Եթէ անգործ էք, լաւ կարելիութիւններ պիտի ստեղծուին: Պիտի ստորագրէք համաձայնագիր մը, գոր այնքան կը ցանկայիք: Օրը փայլուն է ամէն տեսակետով:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
 Լաւ արդիւնք պիտի ստանաք ձեր կատարած աշխատանքէն, մանաւանդ եթէ ուսանող էք: Այսուհանդերձ հարկ է պահէք ձեր շխտասիրութեան կշռոյթը մինչեւ տարեվերջ:

ԱՆԵՂՆԱԻՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
 Պիտի ծախէք առարկայ մը, լաւ գինով, որ պիտի ուրախացնէ ձեզ եւ ձեր զաւակները: Այդ գումարով անոնց համար համեղ անուշեղեններ եւ խաղալիք գնեցէք:

ԱՅԾԵՂԶԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
 Ամբողջովին տերն էք ձեր զգացումներուն: Այսպիսով, պիտի կարենաք իշխել ձեր խօսակիցներուն վրայ՝ առանց նահանջելու ձեր սկզբունքէն: Յաղթանակը ձերն է:

ԾՈՎԱՆՈՅԸ (21 Յունուարէն 19 Փետրուար)
 Պիտի անցընէք շատ խաղաղ գիշեր մը. ասիկա պիտի ազդէ յաջող օրուան ձեր աշխատանքին, ամբողջ օրուան ընթացքին: Պիտի ունենաք հանելի աշխատանք եւ գուրբայի ժամանց:

ՉՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)
 Հոգ մը պիտի նետէք ձեր վրայէն, ու երբ արթննաք, պիտի զգաք թեթեւ ու հանդարտ տրամադրութեամբ: Իրիկունն ալ պիտի բնանաք դարձեալ խաղաղ բունով: Պատե՛հ ո՛ր. ձեր վրայ բեռ եղած անձէ մը պիտի ազատիք:

ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՕՐ / ՅՈՒՅԱՀԱՆԳԵՍ / ԶԲՕՍԱՇՐՉՈՒԹԻՒՆ


ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՋ

Լիբանանի մէջ մշակութային աշխուժ գործունէութիւն յառաջ տանող Գերմանական Մշակութային կեդրոնը այսօր կը կազմակերպէ միօրեայ փառատօն մը՝ «Օքթօպրֆէսթ»:

Միւնիխ յատուկ մթնոլորտը Լիբանանի փոխադրող այս նախաձեռնութիւնը, որ տեղի պիտի ունենայ երեկոյնէն ժամը 8:00ին, Գերմանական Մշակութային կեդրոնի մէջ, այցելուներուն պիտի մատուցէ գերմանական ժողովրդային արուեստի եւ խրախմանքի իւրայատուկ դիմագիծը: Յայտագիրը կ'ընդգրկէ գերմանական գարեջուրի տօնախմբութեան յատուկ բաժին մը, որով կը յատկանշուին գերմանական աշխանային տօնախմբութիւնները: Բնականաբար, այցելուները պիտի համտեսեն նաեւ գերմանական խոհանոցի համադրամները:

Միւնիխի մէջ ռուսական մշակութային կեդրոնը այսօր երեկոյնէն ժամը 6:30ին կը ներկայացնէ երաժշտական երեկոյ մը: Մէն Փետրասպորկի 300 ամեակը նշող տօնակատարութիւններուն ծիրին մէջ կազմակերպուած այս նուագահանդէսը կը մատուցէ ռուսական երաժշտութենէն ընտրանի մը:

Լիբանանի մէջ այլ երկիրներու մշակութային գործունէութեան այս անդամարձին մէջ յիշեցնենք ներկայիս «Հոլիտէյ ին» պանդոկին մէջ տեղի ունեցող քոլոմպիական մշակութային փառատօնը (մինչեւ 18 Հոկտեմբեր) եւ «Մովընփիթ» պանդոկին մէջ տեղի ունեցող պուրիցերիական մշակութային շաբաթը (մինչեւ 19 Հոկտեմբեր):



- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Ժանիւն Ռուպլեյ» ցուցասրահ, մինչեւ 17 Հոկտեմբեր:

- Թատրոն՝ «Պ'Ինթիլլար Կոտո», ժամը 20:30ից, «Պէտրոս» քառասունք, մինչեւ 24 Հոկտեմբեր:

- Նկարչական ցուցահանդէս՝ «Փէյզըզ», Ֆլաւիա Քոտսիի գործերը, «Էսփաս Էս. Տէ.» ցուցասրահ, մինչեւ 18 Հոկտեմբեր:

- Լուսանկարչական ցուցահանդէս՝ «Փայեսին աւան 1948», Ֆրանսական մշակութային կեդրոն, մինչեւ 31 Հոկտեմբեր:

ՕՂԵՐԵՒՈՅԹ

ՈՒՐԱԹ, 17 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003

ՊԷՅՐՈՒԹ ԱՄՊՈՏ

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ 3ԵՐԵԿ՝ 26°C

ԳԻՇԵՐ՝ 19°C

ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 68%

ԱԶԳԱԿ 50 ՏԵՐԻ ԵՄԻՆԱԶ
17 Հոկտեմբեր 1953

ՖՐԱՆՍԱՅԻ ՆԱԽԱԳԱՐԸ ԸՆԿՈՒԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ՄԷՋ
«ՈՐՔԱՆ ՀԱՅԵՐԸ ԿԸ ՍԻՐԵՆ ՖՐԱՆՍԱՆ, ՆՈՅՆՔԱՆ ՖՐԱՆՍԱՆ ԿԸ ՍԻՐԻ ՀԱՅԵՐԸ» Կ'ԸՍԷ ՆԱԽԱԳԱՋ ՕՐԻՈՒԼ

Անցեալ Ուրբաթ օր, ժամը 3:00ից, տեղի ունեցաւ պաշտօնական բացումը Փարիզի հայկական բանգարանին, ի ներկայութեան հանրապետութեան նախագահ Պ. Վենսան Օրիոլի, նախարարներու եւ պաշտօնական անձնաւորութեանց:

Նախագահը դիտելէ վերջ հայկական արուեստի կարգ մը նմուշներ, ընկերակցութեամբ նախարար Պ. Անորէ Մարիի եւ բանգարանի ներկայացուցիչներուն, լսեց Պ. Նուրհան Ֆրեկեկեանի շնորհակալութեան եւ բարի գալուստի ճառը:

Թանգարանին պատուակալ նախագահը, Պ. Անորէ Մարի խօսք առնելով յանուն ֆրանսական կառավարութեան եւ բանգարանին, շնորհակալութիւն յայտնեց Պ. Վենսան Օրիոլի, որ հանած էր իր ներկայութեամբ պատուել յայ բացումը: Ան ըսաւ, թէ հայերը որքան կը սիրեն Ֆրանսան եւ թէ որքան զգացուած էին, որ նախագահը հանած էր անցումը:


ԱՅՍՕՐ՝ 17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ

■ 1957.- Մահ հայ գրականութեան վարպետ Աւետիք Իսահակեանի:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱՐԵԿԱՍԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

Հ.Մ.Ը.Մ. - ՄԱՊԱՐՐԱՎ 1-0

Նկատի ունենալով, որ Լիբանանի ֆուտբոլի ախոյեանության մրցումները դադարի մէջ են, Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի ներկայացուցչական խումբը երէկ Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ բարեկամական մրցում մը կատարեց Մապարրայի դէմ եւ 1-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց: Մրցումին «որք» կողմը նշանակեց Արթուր Քոչարեան (Բ. կիսախաղ): Կիրակի, 19 Հոկտեմբերին, Հ.Մ.Ը.Մ. բարեկամական այլ մրցում մը պիտի կատարէ Շապապ Սահէլի դէմ: Մրցումը տեղի պիտի ունենայ կէսօրէ կտր ժամը 4:00ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ ՓԻԻՆԻԿ ԿԸ ՄՆԱՅ ԱՌԱՋԻՆ

Հայաստանի ֆուտբոլի ախոյեանության 20րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող «Փիւնիկ» երեսն 2-1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք «Միքա» Աշտարակը, ունեցաւ 52 կէտ:

Երկրորդ դիրքին վրայ գտնուող «Քանան» երեսն, որ այժմ ունի 47 կէտ, տիտղոսի տիրանալու չնչին յոյս մը ունի: Երրորդ դիրքին վրայ գտնուող Շիրակ Գիւմրի, որ ունի 40 կէտ, տիտղոսին տիրանալու երբեք յոյս չունի:

ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԿՐՏԱԵՐՆԵՐՈՒ ԵՒՐՈՊԱՅԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԶՏՈՒՄԻ ՄՐՑԱՇԱՐՔԻՆ

20-24 Հոկտեմբերին Պուլկարի մէջ տեղի կ'ունենան 17 տարեկանէն վար ֆուտբոլի կրտսերներու Եւրոպայի ախոյեանության պտուսի մրցումները:

Չտուսի այդ մրցումներուն պիտի մասնակցի նաեւ Հայաստան, իր խմբակին մէջ ունենալով Սերպիան, Հոլանտան եւ Պուլկարիան:

Յաջորդ հանգրուանին իրենց տոմար պիտի ապահովեն իւրաքանչիւր խմբակի առաջին եւ երկրորդ դիրքերը գրաւող խումբերը:

ՍԵՐԵՆԱ ՌԻԼԻԸՍՄ ՊԻՏԻ ԲԱՅԱԿԱՅԻ

Ամերիկացի թենիսիստներ Սերենա Ուիլյամս, որ իր վերջին մրցումը կատարեց անցեալ Յուլիսին, Ուիլյամսը կրնայ շրջանի մրցաշարքին աւարտականին պարտութեան մատնելով իր քուրը՝ Վիլյամսը, իր մասնակցութիւնը պիտի չբերէ յառաջիկայ շաբաթ Լինքոլն մէջ (Աւստրիա) տեղի ունենալիք աղջկանց միջազգային մրցաշարքին, յայտնեցին կազմակերպիչները:

Ռուս Էլենա Պոլինա պիտի ըլլայ Սերենան փոխարինողը, որ անցեալ Օգոստոսին ենթարկուեցաւ ծունկի վիրաբուժութեան:

Սերենա, որ այս մրցաշարքին դասուած էր երկրորդ, իր մասնակցութիւնը պիտի չկարենայ բերել նաեւ յառաջիկայ Նոյեմբերին Լոս Անճելըսի մէջ տեղի ունենալիք ախոյեանության մրցումներուն:

ԿՈՉ

Արտի անհուն գոհունակութեամբ, կը տեղեկացնեն Հայաստանացի առաջնակա Ս. Եկեղեցոյ Լիբանանի թեմի Կիրակոսեայ Դարոցներու բաճակը, Կիրակի, 19 Հոկտեմբեր 2003ին, որ գաղութի հայկական վարժարաններու կողքին օտար այս ամերիկացի հայ մանկան մտքին ու հոգիին մէջ կը դրոշմէ լուսաւորչաւանդ, մտաբանական եւ վարդապետական հայ հաւատքի, լեզուի եւ ազգային ոգիի տարրերը:

Այսօր նոր ժամանակներու սեմին յառաջողութեամբ կը դիմակալէ նոր մարտակոչեր, որոնք առ երեւոյթ կրնան տարբեր թուիլ, սակայն երկրորդ կը մնան նոյնը՝ ինչպէ՛ս մեր մանուկները հեռացնել Աստուծոյ սերնէ եւ մեր հայադրոշմ ինքնութենէն:

Ոչ մէկ կասկած, որ կիրակոսեայ վարժարաններու ցանձմ սերմերը համեստ են, այսուհանդերձ խորապէս կը հաւատանք, որ մեր մատուցած մանուկները հասակ առնելով ապագայի իրենց յաջողութեան բարձունքներէն պիտի անդրադառնան, որ կիրակոսեայ վարժարանը իրենց քրիստոսաշունչ հաւատքի, հայեցի ինքնութեան եւ գիտակցութեան վրայ ամուրաբանի կնիքը թողած է:

Սիրելի՛ ծնողներ, Կիրակոսեայ վարժարանը իր գիրկը բաց կը պահէ իւրաքանչիւր հայրողի, որպէսզի սնուցանէ հայ հաւատքի ու պատմութեան կաթով, հիմերը դնելով մանուկ հոգիներուն մէջ մեր ազգի ապագայ ղեկավարներուն:

Մի՛ գոկէք ձեր զաւակները ազգայն այս սիրուն թոյնէն:

ԿԻՐԱԿՈՍԵԱՅԻ ՎԱՐՉԱՐԱՆԻՆ

ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.Ի ՄՐՑԱՇԱՐՔԻ Ա. ԸԱՆԳՐՈՒՄՆԻ ԴԱՐՁԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԵՑԱՆ ԱՆԱԿՆԱԿԱՆ ԱՐԴԻՒՆԵՆԵՐ

ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.Ի ֆուտբոլի մրցաշարքի Ա. հանգրուանի դարձի մրցումներուն, արձանագրուեցան անակունկալ արդիւնքներ, որոնց ընթացքին գրե-

նեցած մրցումին, անգլիական կազմին մնացեալ կողմը նշանակեցին՝ Էմիլ Հեքի (37րդ) եւ Հերի Քիլը (47րդ):

Այլ մարզիկ մը՝ քամերունցի Սամուել Էթու իր կարգին հէթիք մը իրագործեց (30րդ, 61րդ եւ 69րդ), երբ անոր կազմը՝ Մայրքա 4-2 արդիւնքով պարտութեան մատնեց Ափոնէլ Նիկոսիան (Կիպրոս):

Բ. հանգրուանի մրցումներուն իրենց տոմար ապահովեցին նաեւ՝ Պորուսիա Տորթմունտ, Շթուա Պուրթշ, Նիքիթալ, Ա. Էս. Ռոմա, Վալենսիա, Փարմա, Լանս, Փերուճիա, Պորտո եւ ուրիշներ:

Ստորեւ՝ դարձի մրցումներուն արդիւնքները (փակագիծին մէջ նշուած են երթի մրցումներուն արդիւնքները, մինչ գլխագիրով նշուած խումբերը կ'անցնին Բ. հանգրուան):

ԹՈՐՓԵՏՕ ՄՈՍԿՈՒՍ (Ռուսիա) - Սոֆիա-Յի Բանակայիններ (Պուլկարիա) 1-1 (1 - 1) (Թորփեթո փենալթիներով՝ 3-2 յաղթական)

ՏՆԻԺՓՐՈՓԵԹՐՈՎՍԷ (Ուքրանիա) - Համպուրկ (Գերմանիա) 3-0 (1 - 2)

Վարտար Սքոփիէ (Մակեդոնիա) - Ա. ԷՍ. ՌՈՍՍԱ



Ռոնալդինիո

թէ անծանօթ եւ համեստ նկատուող խումբեր մրցաշարքէն դուրս ձգեցին իրենց մէջ աւելի վորաւոր խումբեր:

Մրցաշարքէն դուրս մնացողներուն կարգին եղան գերմանական երկու կազմեր՝ Հերթա Պերլին եւ Համպուրկ, որոնք յաջորդաբար պարտուեցան Կրոքիին Կրոտպիսքէն (Լեհաստան) եւ Տնիեփրոփեթրովսքէն (Ուքրանիա): Հերթա 1-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց, մինչ Համպուրկ՝ 3-0:

Անոնց երկուքին կրած պարտութիւնները կրնան սուղ արժէք անոնց կազմերուն մարզիչներուն՝ հոլանտացի Հուպ Սթիւրնի (Հերթա) եւ ստորիացի Քրիսթաբալի (Համպուրկ), որոնք կրնան կորսնցնել իրենց պաշտօնը:

Վերջինիս պարագան քիչ մը աւելի ծանր է, որովհետեւ 14 միլիոն եւրօ պարտք ունեցող Համպուրկ Պուլկարիայի ձեռնարկին արձակուրդին ընթացքին, ստիպուած պիտի ըլլայ ծախել իր կարգ մը մարզիկները:

Ա. հանգրուանի դարձի մրցումներուն մեծագոյն յաղթականը հանդիսացաւ Պարսելուն, որ իր դաշտին՝ «Նուրբանի» մէջ 8-0 արդիւնքով ջախջախեց Փուլկովը (Սլովակիա): Պարսելիցի Ռոնալդինիո Կեթիք մը իրագործեց (6րդ, 19րդ եւ 56րդ), Մոթա նշանակեց մէկ կողմ (40րդ), մինչ երկուքնալ կողմը նշանակեցին՝ Լուիս Էնրիքէ (62րդ եւ 74րդ) եւ Սալիուա (71րդ եւ 89րդ):

Լիվըրպուլի արձանագրած յաղթանակին մէջ (3-0) յիշատակելի մրցում մը ունեցաւ ֆրանսացի երիտասարդ մարզիկ՝ Անթոնի Լը Թալլը, որ իր կազմին հետ կատարած առաջին մրցումին իսկ կողմը նշանակեց (30րդ): Օլիմպիա Լիուպիանայի (Սլովենիա) դէմ տեղի ու-



Վլատիմիր Սմիչէր (ձախից), որ կու գայ շնորհաւորելու Անթոնի Լը Թալլէր Գրաքալոս կողմ

(Իտալիա) 1-1 (0 - 4)

ՇԹԵՆՈՒՍ ՊՈՒՔԵՐԷՇ (Ռումանիա) - Սաութհէմթըրն (Անգլիա) 1-0 (1 - 1)

Պլեքպըրն (Անգլիա) - ԿԷՆԲԼԵՐՊԻՐԼԻՃԻ (Թուրքիա) 1-1 (1 - 3)

Պրետա (Հոլանտա) - ՆԻՔԵՄԵՆ (Անգլիա) 0-1 (0 - 5)

ՓԱՐՄԱ (Իտալիա) - Մեթալուրկ Տոնէթցը (Ուքրանիա) 3-0 (1 - 1)

ՊՈՐՈՒՍԻԱ ՏՈՐՓՄՈՒՆՏ (Գերմանիա) - Աւստրիա

Վիեննա (Աւստրիա) 1-0 (2 - 1)

ԼԱՆՍ (Ֆր.) - Սեմնթարնիքա (Մակեդոնիա) 5-0 (1 - 0)

ԼԻՎԵՐՓՈՒԼ (Անգլիա) - Օլիմպիա Լիուպիանայ (Սլովենիա) 3-0 (1 - 1)

ՊԱՐՄԵԼՈՆԱ (Սպանիա) - Փուլկով (Սլովակիա) 8-0 (1 - 1)

ՎԱԼԵՆՍԻԱ (Սպանիա) - Աիք Սոլնա (Շուէտ) 1-0 (1 - 0)

ՊԵՆՅԻՔԱ (Փորթ.) - Լա Լուպիէր (Պելճ.) 1-0 (1 - 1)

ՌՈՒՏԻ ՎԵՕԼԵՐ ԿԸ ԴԺԳՈՅԻ

Գերմանական «Պիլտ» օրաթերթին հետ իր կատարած հարցազրոյցին ընթացքին, Գերմանիոյ ֆուտբոլի ազգային խումբին մարզիչ՝ Ռուտի Վէօլը իր զգոհուածութիւնը յայտնեց, նկատի ունենալով որ անոր կազմը, որ 2002ի Մոնտրիալի աւարտականին հասաւ, չզատուեցաւ առաջին չորս խումբերուն կարգին, որոնք յառաջիկայ տարի Եւրօ-2004ի ֆուտբոլի մրցաշարքին իւրաքանչիւր խմբակի առաջին դիրքերը պիտի գրաւեն: Կը կարծուի, որ առաջին չորս դիրքերը գրաւող խումբերը ըլլան՝ Փորթուգալ (մրցաշարքը հիւրընկալողը), Ֆրանսա (Եւրոպայի ախոյեան), Շուէտ եւ Չեխիա:

«Պիլտ», որ գերմանական ամէնէն աւելի շատ ծախուած օրաթերթն է, շատ աւելի առաջ երթալով, ըսաւ, որ Վէօլը իր խումբը պէտք է, որ մաս կազմէ «մահուան» խմբակին, իրեն մրցակիցներ ունենալով՝ Ֆրանսան, Հոլանտան եւ Յունաստանը:

Հանգուակ անոր որ Հոլանտա տակաւին փէյնօֆի մրցում ունի կատարելիք Սկովտիոյ դէմ, սակայն ըստ Վէօլըրի Հոլանտա պիտի ապահովէ Փորթուգալի իր տոմարը:

ԳԱՏՐԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂՋԻԿՆԵՐԸ ՀԱՄԱՍԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՁԱՆԱԳՐԵՑԻՆ ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ԴԷՍ

Փլովտի մէջ (Պուլկարիա) տեղի ունեցող Եւրոպայի ձառնարկի աղջկանց խմբային մրցաշարքին յոր հանգրուանի մրցումներուն, Հայաստանի աղջիկները հաւասարութիւն արձանագրեցին պուլկարացի իրենց մրցակիցներուն հետ: Էլինա Գանիէլեան հաւասարեցաւ Անթուանէթա Սթեֆանովայի հետ, իսկ Լիլիթ Սկրտչեան՝ Էմիլիա Չինքարովայի հետ:

Հայաստանի աղջիկները այժմ կը գրաւեն երկրորդ դիրքը, նկատի ունենալով որ անոնք ունին 8 կէտ: Պարագլուխի դիրքը կը գրաւէ Ռուսիա՝ 9 կէտով:

Իսկ տղոց խմբային ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը կը գրաւէ դարձեալ Ռուսիա՝ 10 կէտով:

ՕԼԻՎԸՐ ԶԱՆ ՎԻՐԱՒՈՐՈՒԵՑԱԻ



Պայէրն Միւնիխի բերդապահ՝ Օլիվըր Բան, որ երէկ փորձերու ընթացքին վիրաւորուեցաւ շատ հաւանաբար իր մասնակցութիւնը չկարենայ բերել շաբաթվերջին Պորուսիա Մէօնընկլատպախի դէմ տեղի ունենալիք մրցումին (Պուլկարիա), ինչպէս նաեւ յառաջիկայ երեքշաբթի, 21 Հոկտեմբերին Լիւնի դէմ տեղի ունենալիք ճակատումին («Չէփիլընկ Լիկ»):

Նկատի ունենալով որ Պայէրն իր այդ երկու մրցումները պիտի կատարէ օտար դաշտերու վրայ, կը մնայ մտահոգ, որովհետեւ Բանի այդ պաշտօնը պիտի վստահուի 19 տարեկան անփորձ բերդապահ Միքայել Ռեւսիկի, որ ցարդ իր ակումբին հետ դաշտ չէ ներկայացած:

Շաբաթ օր «Պրելիպէրկ» դաշտին մէջ տեղի ունենալիք այդ մրցումէն թէեւ Բան կրնայ բացակայիլ, սակայն նախապէս վիրաւոր երկու մարզիկներ՝ Սեպասթիան Տէյլըր եւ Միքայել Պայաք ապաքինած ըլլալով իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Պորուսիա Մէօնընկլատպախի դէմ տեղի ունենալիք մրցումին:

Յրդ հանգրուանի մրցումներէն ետք, այժմ Պայէրն Միւնիխ 17 կէտով կը գրաւէ 4րդ դիրքը, իսկ Մէօնընկլատպախ՝ 5 կէտով նախավերջին դիրքը:

ՄԱՔԼՐՈՅ ՀՐԱԺԱՐԵՑԱԻ

Չորս տարի իր պաշտօնին վրայ մնալէ ետք, Հիւսիսային Իրլանտայի ֆուտբոլի ազգային խումբին մարզիչ Սէմի Մաքլըրը երէկ ներկայացուց իր հրաժարականը, եւ ստանձնեց Սթրոքփոր Բառնիթի (Բ. դասակարգ) մարզիչի պաշտօնը, որուն հետ երեք տարուան պայմանագրութիւն մը ստորագրեց:

Եւրօ - 2004ի ֆուտբոլի մրցաշարքին գտնւմի մրցումներուն անոր կազմին արձանագրած արդիւնքները եթէ նկատի ունենանք, վստահաբար, որ նախընտրելի պիտի ըլլար, որ ան ներկայացնէ իր հրաժարականը, քան՝ պաշտօնանկ ըլլալ:

Իր կատարած ութ մրցումներուն, Հիւսիսային Իրլանտա արձանագրեց երեք հաւասարութիւն եւ կրեց հինգ պարտութիւն, այսպիսով մրցաշարքը աւարտելով վերջին դիրքին վրայ: Անոր մարզիչները ոչ թէ միայն յաղթանակ չյաջողեցան արձանագրել, այլեւ մրցաշարքը աւարտեցին առանց կողմը իսկ նշանակելու:

Իրենց պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով է, որ Հիւսիսային Իրլանտայի մարզիկները կը ձախողին յաղթանակ մը արձանագրել՝ գտնւմի մրցումներուն: Բացի այդ մէկէն, անոնք յաջողաբար 13րդ մրցումն ըլլալով կը ձախողին կողմը նշանակել:

●ՆՐՈՒԱԹԻՈՅ ֆուտբոլի ազգային խումբին մարզիչ Օթթո Պարիչ, երէկ իր կազմին դուրս դրուելով փուլի յետապահ՝ Իկոր Պիսքանը, որովհետեւ ան Պուլկարիոյ դէմ տեղի ունենալիք մրցումին նախօրեակին լքեց իր կազմը, յայտնելով, որ մրցումին իր մասնակցութիւնը պիտի բերէ միայնակ իր խմբակիցներուն:

25 տարեկան Պիսքան ֆուտբոլիստի իր ասպարէզը սկսաւ Տինամօ Չալըրէպի հետ (1997ին), ապա Դեկտեմբեր 2000ին միացաւ Լիվըրպուլի, հինգ տարուան պայմանագրութիւն մը ստորագրելով անոր հետ:

Ան Սրուսկիոյ ֆուտբոլի ազգային խումբին շապիկը կրեց 12 անգամ (առաջին անգամ՝ 1999ին):

ԻՐԱՆ՝ ԱՍԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆ

Իրանի ֆուտբոլի ազգային խումբը 3-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Նոր Զելանտան, Հանոյի սացաւ Ասիոյ եւ Ովկիանիոյ ախոյեան: Իր արձանագրած այս յաղթանակէն ետք, Իրան անգամ մը եւս փաստեց, որ իրանեան ֆուտբոլը զարգացման մէջ է:

